

ՊԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուկարիոյ համար 12 Տր
Տարեկան 6
Վեցամսեայ Արասահմանի համար սարեկան 15
Վեցամսեայ 8

Աներիկայի համար 3
Տարեկան 4.50
Վեցամսեայ 1.50

Պատկերներ տպուկ
հին և նորին համար 40
ս. իսկ վերջին երեսի համար
20 սակարկել է. երեք
հին և նորին անգլիացիներու
համար 20 0/0 գնույ կըլ

Վառեայի համար ձեռք 40 սակարկել

ՉԱՐԹԻՍ

ՎՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՄԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ և գրամ գրկի
և իրացրուք ձեռք
համար 530

Редакция на востокъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արասահմանի համար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուկարիոյ համար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրուք ձեռք ևս չե՛ք տրուք

ՉԱՐԹԻՍԻ ԲԱՏԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՏԱՆԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՍԻՍՏԵՍԸ ԱՐԴԵՆ ԿԱՅ

Ամերիկայից Ռուսուկի...
ձեռք ձեռք ձեռք
Հնչակահայերի օրգաններից մին
է, հեռագրում են, թէ Սապահ-
գիլիանին վիրավորել են, բա-
րեբախտաբար վերջը մահացու
չէ:

Ուրեմն այսօր նոյն յանցանքի
մէջ են գտնվում Վերակազմեալ-
ները. նրանք էլ նոյն ոճիւրն են
գործադրում իրենց երեկվան
ընկերների վրա, ինչ որ գոր-
ծադրեցին հինները:

Եւ դեռ պարոն հնչակահայերը
նեղանում էին երբ յայտնում
էին, թէ ընկերասպանութիւնը
սխառմի վերածվելու վրա է հըն-
չակահայերի մէջ:

Այսօր այդ վտանգաւոր սխա-
ռմի իրապէս գոյութիւն ունի.
մի երկու ամսվան ընթացքում
երկու հնչակահայ գործիչներ ըս-
պանվեցին, երրորդի վրա սպա-
նութեան փորձն է տեղի ունեցել,
ևստուած չարագից ազատի:

Այսօր վերակազմեալներն էլ
իրենց թերթերի միջոցով յայ-
տարարել կը մտածեն. «Կեցող-
նը տեղեկութիւն չունի, անձ-
նական կրքի արգիւնքէ Սապահ-
գիլիանի գէժ եղած սպանու-
թեան փորձը եւ այսպէսով կու-
զեն քննանել Հայ ժողովուրդի
բողոքը խիզճը»:

Եւ հայ գուժիչների կեանքի
հեռադպրութեան թեմաքաղաք
զացող կազմակերպութեան երկու
եղբայրասպան հատուածները
յանգղուցիւն ունին հայ ցա-
ւերին դարձան ուղղների վսեմ
գերը կատարելու յաւակնութիւ-
նը ունենալ:

Մենք մնում ենք չարած,
այլևս խօսք չենք գտնում՝ որա-
կելու այդ կործանարար սխառմի
և նրա ստեղծողներին:

Չենք կարողանում հաւատարմ
հնչակահայ երկու հատուածների
մէջ էլ չկան լուրջ անհատներ,
որոնք կարող են այդ սխառմին

վերջ տալ. Բայց ու՞ր են կորել
գրանք. ինչ են անում, միթէ
իրենց ընկերների անժամանակ
և եղբայրասպան ձեռքերի տակ
զաւարժող գիտկները իրենց ե-
րեւակայութեան մէջ չեն ցըց-
վում և ստիպում ժամ առաջ կազ-
մակերպութիւնների ղեկը սովո-
րական մարգասպանների ձեռքից
ազատել:

ՎԱՐՈ

ՃՈՐԹԻ ԶԱՌԸ
(Կրճատում)

Շար. նախորդ քիւնե

Յարը իսկոյն կուզէ Բլէվէն
աննալ. որը ներկայանալով կսէ.
զգուշացէք, ձեր գթասիրութիւ-
նը պիտի նկատուի իբր նշան իշ-
խանութիւնները պատարակելու.
երբ բացարձակ միապետ մը կըս-
կսի իշխանութիւնները չը յար-
գել, որոնք միապետին մեծու-
թեան ու զօրութեան ճառագայթ-
ները մինչեւ ժողովուրդը կը տա-
րածեն, երբ բացարձակ միապետ
մը փոխանակ իրեն սխառմի աը-
րամարանութեանը հետեւելու ի-
րեն խզճին անկանոն թելագրու-
թիւններուն կը հետեւի, ան ա-
տեն ինքը կը կորսուի. զգուշա-
ցէք:

Եւ ամբողջ Ռուսիոյ տէրը այս
խօսքերուն դէմ սարսափեր է:
(Մափահարութիւններ)

Եւ անա թէ ինչու պաշտօ-
նապէս օգնութիւն չըրկուցու-
Քիչինէ՞քի զոհերուն. և անա թէ
ինչու մենք իրաւունք ունինք ը-
սելու, հակառակ Յարին անձնա-
պէս սպասարանատու չըլլալուն,
որը Ռուսական միապետութեան
թէ՛ առաջին գլուխն է և թէ՛ ա-
ռաջին ստրուկը, որ կոտորածնե-
րուն պատճառը ցարիզմն է, բա-
ցարձակ միապետութիւնն է:

(Մափահարութիւններ)

Ո՛հ, փաստերը ամեն կողմէ
գուրս կը ժայթքին. Ամիսներէ ի
վեր նախարար Բլէվէն կը փոր-
ձէր կայսրութեան մէջ հետզհե-

տէ մեծցող դժգոհութիւնը ուղ-
ղել դէպի հրէաները...
Բայց բան մը կայ որ սուր
կերպով աչքի կը զարնէ. այն է
որ միապետութիւնը և Պիւրոկրա-
տիկը զարգացման այն կէտին
հասած է որ այլևս ինքզինքը
բռնել չի կրնար:

Այսօր ընդարձակ և բազմա-
ցիղ Ռուսաստանի պայմանները
այնքան բարդուած ու խճուղուած
են որ կայսերական ոչ մէկ ուղի
պիտի կարենայ ղեկավարել այս
երկիրը և միապետութիւնը պի-
տի իյնայ:

(Մափահարութիւններ)

Աւրիշ երեւոյթ մըն ալ աչքի
կը զարնէ. Որ միապետութիւնը
իր պաշտօնեաներով այլևս հա-
սարակական կարծիքը չեն արհա-
մարեր. այլևս չեն կրնար հաշ-
ւի չառնել Եւրոպայի գիտակցու-
թիւնը. և անա թէ ինչու Եւրո-
պայի Քիչինէ՞քի գէպքերու հա-
մար արձակած առաջին դժգո-
հութեան միջոցին նախարար Բը-
լէվէն իսկոյն զիմեց ժամանակա-
կից միջոցին, թղթակիցներուն
հետ տեսակցութիւն ունենալով:

(Շարունակելի)

ՓՈՒՆԳՏԱՏՈՂՆԵՐՈՒ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԸ

Ժամանակիս ամենաբեղուն ոգի-
ներէն մէկն է ընկերութեան ոգին.
որ մեծապէս զարգացած է մանաւանդ
Միացեալ-Նահանգներու մէջ. Ընկե-
րակցութեան կամ համերաշխ գոր-
ծունէութեան բարիքները անհամար
են. ու գիւրբմունցի: Բազմաթիւ
ուժեր, բազմաթիւ իմացականու-
թիւններ՝ մէկը մեկէն աւելի հան-
ճարեզ և խորաթափանց, բազմաթիւ
կամեցողութիւններ՝ իրարմէ աւելի
նախաձեռն ու գործով միանալով
անպահ զօրութիւն մը կը ներկայա-
ցնեն, որուն առջեւ արգելքներն ու
դժուարութիւնները չուտով տեղի
կուտան: Առանց ընկերութեան բա-
րեբար ոգիին այսօր շատ հեռու պի-
տի գտնուէինք տակաւին՝ քաղաքա-
կրթութեան սրբի վիճակէն:

Ընկերակցութիւն մը մէկէ աւելի
յատկութիւններ կը պահանջէ իր ան-
դամներէն. Արգարեւ որպէսզի ար-
դիւնաւոր և իրական, նոյնիսկ կա-
րելի ըլլայ այն, պէտք է որ զայն
կազմողները կարենան գնահատել
զիրար, տեսնել իրարու յատկու-
թիւնները, բան մը որ շատ զիւրիւն
է մէկու մը համար որ ինքնիրով
փքացած չէ, եւ պատգամ մը, հան-
ճար մը ըլլալու յաւակնութիւնը
չունի, որուն առջեւ ուրիշները մի-
այն պարտին խոնարհել: Այս տեսակ
անգամներով ընկերակցութիւն մը
չնորք մըն է միայն: Յարգանք և
վստահութիւն իրարու նկատմամբ,
անա՛ արգիւնաւոր ընկերակցութեան
մը գլխաւոր պայմանները: Եւ որպէս
զի մարդ կարենայ յարգանք և վըս-
տահութիւն ունենալ ուրիշի նկատ-
մամբ, պէտք է որ քաղաքակրթուած
ըլլայ, վարչերին, ինչպէս և կիսա-
վարենին իրենց հաւասարները յար-
գել չեն գիտեր, համերաշխ գործու-
նէութեան ընդունակ չեն, կամ շատ
քիչ, անա ինչու կարելի է դատել
ժողովուրդի մը զարգացման և քաղա-
քակրթութեան աստիճանը, անոր
մէջ գոյութիւն ունեցող ընկերու-
թիւններու քանակէն եւ որակէն:

Բայց գանք մեր փոնգապոզներու
ընկերութեան: Աւելորդ պիտի ըլ-
լար ըսել թէ այս տարօրինակ ըն-
կերութիւնը ծնունդ առած է Ամե-
րիկայի մէջ:

Նպատակը շատ գովելի է ու կը
կայանայ խարի տենդին դէմ դար-
ման մը գտնելուն մէջ:

Գիւղացիները մանաւանդ ենթակայ
են այս տարօրինակ տենդին, որուն
ենթական երկար վարկեաններ,
նոյնիսկ ժամեր ամբողջ կը փոնգապո-
նադադար, ինչ որ յոյժ տաժանա-
կից է. — պատճառ կ'ըլլայ կոտրա-
ծութեան, ուժասպառութեան:

Ամէն երկրի մէջ այդ հիւանդու-
թեանն րոնկողներ կան, բայց կ'երե-
ւի թէ Միացեալ-Նահանգներու մէջ
անոնց թիւը շատ մեծ համեմատու-
թիւններ առած է, փոնգապոզներու
ընկերութիւնը արդէն իսկ երկու
հարիւր հազար անգամ ունի, ինչպէս
քիչ մը վերը ըսի, ընկերութեան
նպատակն է ուսումնասիրել խարի
տենդը, ասոր պատճառներն և ասկէ
զերծ մնալու կամ ազատելու միջոցնե-
րը: Ընկերութիւնը տարին մէկ ան-
գամ ամբողջական նիստ պիտի գու-
մարէ, ուր պիտի հաղորդուին խու-
զարկութիւններու արդիւնքները:
Բայց եթէ այդ նիստին ներկայ ըր-
լոր անդամներն ալ սկսին փոնգապո-
զը:

ու այս՝ երկար ժամեր... կը տեսնէք թէ ամէն պարագայի մէջ այդ գրեմարումը մեծապէս շահեկան պիտի կրնայ ըլլալ:

Փոնք տացողներու ընկերութեան կազմութենէն առաջ եղած են գիտուններ որոնք այդ տաղտկացուցիչ հիւանդութիւնը ուսումնասիրած են: Այսպէս Մ. Պլաքէյ փորձով հաստատած է որ ծաղիկներու, մանաւանդ սէզաղիկներու ծաղիկներուն բեղուն փոշին է պատճառ խարի տենդին: Բեզուն փոշին մտնելով ունեւորներուն մէջ գրգռութիւն յարուցել կը բերէ, որուն հետեւանքը կ'ըլլայ ժամերով անդադար փոնքառ:

Ինչպէ՞ս կարելի է զերծ մնալ կամ ի հարկին ազատել այդ գրգռութենէն: Կան որ այս հարցումին պատասխան տալ կը փորձեն այլ եւ այլ ներարկումներով: Այսպէս Մ. Գրոթիս կը յանձնարարէ ծաղիկներու, մանաւանդ վարդի, մանուշակի ևնֆիզիոն ներարկել մարթին տակ. գրական արդիւնքներ ձեռք բերած ըլլալ կը թուի, մինչդեռ Մ. Ուիլսոն յանձնարարուած միջոցին ժխտական արդիւնքներ միայն ստացած է:

Մ. Տրնդար նոյնիսկ բեզուն փոշիներու ինֆիզիոնին մէջ կը գտնէ փնտռուած գեղը. բեզուն փոշիները յառաջ կը բերէն խարի տենդը, աւոնց ևնֆիզիոնը պէտք է որ այդ հիւանդութենէ զերծ պահէ մարդը կամ ազատէ անկէ բռնուողը:

Խնդիրը այս կէտին հասած էր իրեն խարի տենդէն բռնուողները ընկերութիւն մը կազմելով ուզած են իրենց ձեռքն առնել զիրենք տառապեցնող հիւանդութեան դարման մը գտնելու գործը: Իրաւունք ունին, Բարի յաջողութիւն:

ԹՂԹԿՑՈՒԹԻՒՆ

1903 Յունիս 9 Հափքվան

Մեր անցեալ թղթակցութիւններէց մէկում պատմել էինք Հ. Ընձակ փոխանորդի մուտքը Սալմաստ և նորա

ՍԵՄԻՆ ԱՌՁԵԻ

Տ. ԲՈԼԵԱՆՅՅ

Ձեզի, ազնիւ ընկերութիւններս, Ս. Պ-նա, Պ. Պետ-ն և թ. Ս-նա Ա. Յ.

(Շար. Ասխուրդ թիւին)

Տակաւին կէս ժամ չանցած մայրն ու աղջիկը, կանթեղ ձեռքերին, խոթողաղէմ հիւրը զրկեցին:

Բաժնուելու ատեն ժիվքան՝ «մօրեղբայր» ըսելու չհամարձակելով, «պարոն Բանձօֆ» ըսաւ: Մայրը դիտեց այս բանը ու վեր գառնալուն պէս սկսաւ յանդիմանել:

— Միթէ չե՞ս գիտեր թէ մեր կեանքը անկէ կախուած է... Ձեր տնայ չըլլար: Ինձմէ լաւ գիտես... Ձեր բաւեր որ Սբա մեր տունը գաւա հետը խօսելու եւ առանց սովորուող զայն ազարտելու-արեւակից չե՞ն, Աստուած իմ, չէր բաւեր անորը, վրան գուն ալ այնպէս մը կը վարուիս որ մտածէ. «ասոնք ալ հետն են... Աստնք

ունեցած բարերար ազգեցութիւնը. այժմ նորա կատարած մի ուրիշ աչքի ընկնող վարմունքի մասին է ինչեղ մեր ներկայ գրութիւնը: Մենք Դարսոյի մասին գրել էինք. որ նա Սալմաստի փճացած ժողովրդի արգասիքն էր և իրօք էլ այդպէս էր: Նա ճանկուած կաշկանդուած էր մի քանի պոռնիկ կանանցով. որոնք մի կողմ դրած իրանց պատիւը, ընտանեկան սրբութիւնը, իրանց պանդոխտ ամուսնուն դառն քրտինքներով մէջ, գուարճանում էին Դ-ի կամ ուրիշի տառփանքով: Իսկապէս, «գոնէ իմ կարծիքով, ամուսնական սրբութիւնը պղծելուց աւելի քստմնելի յանցանք չի կարելի երեւակայել: Մի րոպէ պէտք է մտնել կոնջ ամուսնու գրութեան մէջ. որ պանդխտութեան դաժան զաւազանը ձեռքը առած, գնում իր ընտանիքի պարէնը: Նայթիայի կողմ և այն էլ տաժանելի աշխատանքով, իսկ կինը, որին նա վստահացած էր իր պատիւը, խախտում է ամէն օրէնք, ոտնատակ է տալիս ընտանեկան պատիւը և ընկնում օտար մարդու գիրկը: Խնդրեմ ասացէ՛ք ինչպէս պէտք է վարվի այդ դէպքում այր-ամուսինը. իմ կարծիքով կամ պէտք է սպանի, կամ եթէ դա խիստ է զուրս վաւեր: Շատ լաւ այդ այդպէս ընդունելուց յետոյ միթէ կարելի է մեղադրել մեր փոխանորդին-Հ. Ընձակին, որ իբրև ժողովրդի հայր կոնջ ամուսնոյն գոնէ մասամբ մխիթարելու համար և նրա ցաւերի դարման դնելու նպատակով խոզում է պոռնիկ կոնջ մազերը: Ի միջի այլոց կարելի է ինչեղ, որ պոռնիկ կոնջ մազերը խոզելը հաստատուած է մեր եկեղեցական օրէնքներում: Այդ մեղմ պատիժը ոչ միայն ամուսինների համար լաւ եղաւ, այլև ամբողջ հայ ժողովրդի վերայ լաւ ազդեցութիւն թողեց, որով մարդիկ գոհ էին և ընդունում էին որ դա խրատ կարող է լինել այլ կանանց էլ: Ուրեմն կանանց այդ պատժին ենթարկելը թէ ժողովրդի պահանջն էր, որ նոյնիսկ քիչ էր կարծում այդ և թէ օրինական: ամենաազատ միտ և ամենալուսաւորեալ

են զայն տուն կանչողը... — Բայց ի՞նչպէս գէշ վարուեցայ, կարողարանոր ժիվքան, չըրկեցի՞ զայն: Պարոն Բանձօֆ՝ բախում համար... է՛, մայրիկ, չափը կանցուցես... Իսկ է՛ն վերջը ուրիշէ՞ց ուր մօրեղբայրս ըլլայ: Ըսէ նայիմ... Գրոթս մօրեղբայրն ըլլալով, էրկանը մօրեղբայրը ինչո՞ւ ըլլալով մօրեղբայրս ալ ինչո՞ւ ըլլայ: Տես, Ազգախնայր մօրեղբայր կըսէ՞: — Ձգէ դուն անառակ եղբայրդ, իբր թէ աւելի խելացի ես... — Իրաւունք ալ ունի, իրաւունք ունի ան... — Սբասին պէս դու՛ն ալ պիտի սկսիս շարել ով իրաւունք ունի: — Իրաւունք ունի... վերջապէս, աւելի լաւ է «պարոն» ըսել, քան «մեծ հայրիկ»... — Այնչափ չեմ հասկնար, այնքան խելքս չի հասնիր, բարկութեամբ մը բաւ մայրը: Եւ առանց ընթրի կարենալու, սեղանէն ելաւ ու նորէն սկսաւ: — Ինձմէ լաւ գիտես, որքան հոգ կը տանի մեզ ան... անս անոր ատենը կը բնակինք... — Եթէ կը բնակինք, կը վճարենք... Եթէ մենք չըլլանք, ուրիշներ

երկրներում իսկ ընդունուած է յանցաւորին պատժել ըստ տեղական պահանջների. եթէ մենք ընդունում ենք ամուսնական կեանքում սրբութիւնը, ուրեմն պէտք է ընդունենք և սրբութիւնը պղծող-յանցաւորի պատժութիւնը, որչափ էլ ազատամիտ, որչափ էլ լուսաւորեալ լինենք: Ինչպէս էլ վերցնելու լինենք, այնուամենայնիւ տեսնում ենք Հ. Ընձակի Մահաւորի կանանց վերաբերեալ արգաւորի վարմունքը: Իսկ Պ. Լէօն վրդովուած Հ. սուրբի այդ վարմունքից, առանց ծանօթ լինելու տեղական հանգամանքներին և ժողովրդեան պահանջներին, մեղադրում է նորան ինչ-ինչ պատճառաբանութիւններով: Պ. Լէօն՝ ծայրահեղութեան մէջ է ընկնում և այդ վարմունքը նոյնիսկ բարբարոսութիւն է կոչում: Խնդրեմ ասացէ՛ք. միթէ պոռնիկ կոնջ մի օրինական պատժ ենթարկելը բարբարոսութիւն է. հապա ի՞նչ տեսնել պէտք էր վարվի, անպատիժ թողնել, նշանակում է ուղարկութիւն չի դարձնել ընտանեկան սրբութեան վերայ, իսկ այդ միեւնոյն է թէ խախտել հայի դարաւոր բարոյականութիւնն ու մաքրութիւնը, եթէ լուզում ենք մեր ազգը իր գոյութիւնն ու յարատեւութիւնը պահպանել, պիտի պաշտպան կանգնինք նորա յասկանիչ բարոյականութեանը: Մի մարդ կարող է համամիտ չլինել այդ վարմունքին-պոռնիկ կոնջ մազերը խոզելուն, բայց և վեր կենալ իզուր տեղը մտքեր պղտորել, և մի չափազանց-ժողովրդի սիրուած ու յարգուած հովուի վարկերկել, այդ էլ լաւ վարմունք չէ: Սալմաստի ժողովուրդը Հ. Ընձակի նման լաւ փոխանորդ չէ ունեցել, այնպիսի հովու, որ գանձն իւր դնէ ի վերայ ոչխարացն: Ձարաբանութիւնները իզուր պիտի անցնին և մենք յոյս ունինք Հ. Ընձակը չի յուսահատուի զրանցից:

Տոյակ



պիտի վարձեն: Մեր դրամովը կը բռնակինք, — պատասխանեց աղջիկը: Բայց աս ալ չը կասեցուց պատառը: — Միտքդ բեր միայն քանի անգամ է որ մեզ կօղնէ... Եթէ ան չըլլար, հիմա հոս կը գտնուէիր... Ը՛վ գիտէ որ դիւրին անկիւնը պիտի կորսուէիր Սթօքսային պէս: — Է, սեպտեմբ թէ օգնեմ է... — Ոչ թէ սեպտեմբ, այլ օգնած է, մարդը քեզ օգնեց, պաշտօնի դրաւ, իսկ դուն հիմա չես յարգեր զայն... — Իսկ ասով քու եղբայրդ եղաւ որ չնորհակալութեան համար մօրեղբայրս ըսեմ. — սկսաւ ծիծաղել ժիվքան: — Եղբորդ պէս կը խօսիս... Բայց տես, ահա հիմա մարդը շա՞խտատիք քու՝ մեր բարօրութեան համար: Մեզի համար չի՞ բարեխօսեր: Աղջիկն ըլլալով, նորէն այսչափ չէր հոգար... Չես տեսնար թէ միշտ սօքթորին հետն է, ըլլալովը անկէ պիտի գայ... Մինչեւ որ ատենն է... Մինչեւ որ սօքթօրը կուգէ... ա՛լ պզտիկ չես... Տարիներ մէկիկ մէկիկ կանցնին... Դեռ երկար խօսեցաւ անհնազանդ աղջկան և սովորականին պէս սպասուելով վերջացուց:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԻՆ Պ. ՊԼԷՎԷՆ

Թուրքերի սնցած սեղերում աներակն ու սուգն է հիւնը

(Թարգ. «Հորպիէնից») (Շար. Ասխուրդ թիւին)

Բանտումի, հրացանի բռնումի սարսափներով մէջ, որոնք թափվում են մտաւոր և գործարար դասակարգերի գլխին երկու կարգ գործեր կան որոնք եւրօպական խղճմտանքին են կոչանում: — Յարիսանների խտուածիւնները Ֆինլանդիայում և պաշտօնական հակահրէականութիւնը, որ իր ամբողջ սարսափով երեւայ Գիշինէլում:

Ես այսօր չեմ ուզում խօսել, ու՛էօօօպէէէնի այնքան աշխատկիցներից լիտայ, Ֆինլանդական դրամաների մասին որոնք ամօթի կարմրութեամբ ծածկեցին ամբողջ պատուաւոր Ռուսաստանի ճակատը և զգանք յարուցին ամենքի մէջ:

Դատարարի խղճի, օրէնքների իրաւունքների, բնակարանների, սեփականութեանց և անձերի վրա բռնութիւններ կարող են լինել միայն կարմիր սուլթանի և ճերմակ ցարի կառավարութեան տակ, երկու լրացուցիչ գոյներ թէ կատարութեան և թէ սարսափի տեսակետից:

Բայց առանց այն մանրամասնութիւնների մէջ մտնելու, որոնք իմ աշխատակիցներին ճիւղին են վերաբերում, սուղում եմ և պարտաւոր եմ խօսել Ֆինլանդական: Գրամայի կողմնակի անցքերի և գործերի մասին որոնք իրապէս չարաշուք լոյս են ձգում

— Չես մտածեր թէ այսօր կամ վաղը չկամ...:

Եւ չսփափեցած դեռ՝ անարգուած խնամիրն համար զգացած վարկէն ու ամօթէն բարկացած ժիվքանին՝ Բօրլօմօֆին առաջարկին ոչ «այո», ոչ ալ «ոչ» չըսելուն համար, բարկանալով նաեւ տղուն՝ այս գիշեր ալ ուշացած ըլլալուն համար, վերջապէս պաշարուած մօտեցող մահուան մտածումէն — Ռատօփից սենեակ մտաւ, խաչակիքեց Ս. Աստուածածնի պատկերին առջեւ երկրպագեցաւ, որ սրբութեամբ էր անկիւն մը՝ ազատ լոյս արձակող կանթեղի մը ետին, որ կը վառէր երկոյան ժամերգութեան զանգալը զարնելուն պէս: — Հագուստները հանց, և քունը կամաց կամաց անոր վրդովելի մասածուսները քողարկեց:

Երկար ատեն ժիվքան ուշ գրաւ մերթ դէպի պարտէզը, մերթ դէպի սենեակը: Եւ համոզուելով թէ մայրը չպիտի լսէ, մատերուն վրայ վար իջաւ քնացած բակին մէջ, ու կարծես մղուած իրմէ աւելի գորուոր բանէ մը, ծաղկաստանին քովէն անցաւ, հոս ու հոն կախուած ճիւղերը վեր-

այն ոճը գործուծեան վրա որ շարունակուած է նիկոլա երկրորդի և իր գործակատար Բօբրիկովի կողմից:

Ահա մի անցք իրեղեռական ամբողջ պարզութեամբ:

Մի երիտասարդ գիտնական Ֆինլանդացի, Տօքթ. Լ. արտասահմանում իր աշխատութիւնները վերջացնելուց յետոյ վերադառնում էր Հայրենիք և Բերլինում իր կնոջ հետ կանգ առած միջոցին տեղեկութիւն է ստանում որ ինքը դատապարտուած է մշտապէս հայրենիքից արտաքսուելու, որովհետեւ նրա ծնողները մօտ խուզարկութիւն կատարված միջոցին իր նամակներն են գտնվել որոնց մէջ ինքը դատապարտուած է Ռուս իշխանութեանց ոճիրը:

Այդ միջոցին երիտասարդ գիտնականը իր ապագայի և կեանքի քայքայման հանգէպ, իր կնոջը յայտնելով որ շուտով պէտք է վերադառնայ սենեակից դուրս և գալիս, գնում է Տիբեր գարդէն և ուղեկը գնդակով ցրովում:

Երեւակայեցեք ուրեմն Եւրոպացիներ, գուք ազատ երկիրների քաղաքացիներ, թէ ինչ ահուգողի մէջ են այն Ֆինլանդացիները որոնք ապրում են արտասահմանում և չգիտեն թէ վերադարձին իրենց ինչ վիճակ է սպասում իրենց դժբախտ հայրենիքում, թէ եւ նրաք յեղափոխականութեամբ էլ չեն զբաղվում, ինչպէս էր Տօքթօր Լ.:

Եւ մեր պատմած սարսափելի դրաման ձեր կողքին է կատարվել, ով գուք Եւրոպայի ազատ քաղաքացիներ, այն ատրճանակի պայթումը գուք լսեցիք ինչպէս

եւ լացը այդ դժբախտ և աչնի երկրի և գուք զզուանք էր զգում միայն սերայ սպաների դէմ որոնք սպանեցին մի արքայական զոյգի որը իրենց երկիրը մղում էր դէպի անխուսափելի աղէտը:

Ով քաղաքակրթված Եւրոպայի քաղաքացիներ, զգուշ եղէք որ պատմութիւնը ձեզնից, ձեր ժամանակից ամօթով երես չը դարձնէ:

Իսկ գալով այն գրամային, որ մէջտեղ եկաւ Քիշինէֆի գէպքերով խակական ճշմարտութիւնը որ միայն հիմա է սկսվում իմացվել աւելի սարսափելի է քան մինչեւ հիմա կարծվածը:

(Շարունակելի)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ

Ասկէ մէկ քանի ամիս առաջ, Պուրկապէն Ե. Թորիկեան և Մարտիկ Մումեան անուն անձերը հանգանակութեան մը ելած էին տեղւոյս ազգային վարժարանի անուան. այդ երկու անձերը շրջելով Վառնա, Պալչիկ, Ռուսուզ, Սիլիստրէ և այլ քաղաքներ յաջողած են պաշտօնական հանգամանք մը տալով իրենց ձեռնարկին, մեծկակ գումար մը հաւաքել, որու մասին սակայն ց'արք չ'են ուզած հաշիւ տալ, և ոչ մէկու, հակառակ իրենց եղած կրկնակի հրաւերներուն, թէ' հոգաբարձութեանս, թէ' պատ. թագ. խորհրդոյ և թէ' ընդհանուր ժողովրդէ ընտրուած յանձնախմբիմը կողմէ:

Հոգաբարձութիւնս որ միակ պատասխանատուն է, ոչ միայն Հայ ժողովրդի առաջ, այլ Պուր-

կար կառավարութեան քով ա'լ, վարժարանի շուրջը դարձած ամեն խնդիրներուն մասին, վերոյիշեալ Մարտիկ Մումեանի և Ե. Թորիկեանի ըմբոստ բնթացքի հանգէպ. տխուր հարկին մէջ գտնուեցաւ, վարժարանի շէնքի գնման համար միայն հանգանակուած այդ գումարը իրենցմէ գանձելու համար կառավարութեան զիմել, համաձայնութեամբ պատ. թագ. խորհրդի հետ:

Արդ' այս տեսակ անհաճոյ քայլեր առնելու վերստին ստիպուած չ'ըլլալու համար, կր խնդրուի Պուրկապէն մեր բոլոր ազգայիններէ որ այսուհետեւ զգուշանան իրենց նուէրները յանձնելու այն տեսակ անձանց, որոնց պաշտօնը վաւերացած չ'է թէ պատ. թագ. խորհրդոյ և թէ հոգաբարձութեան կողմէ միանգամայն, և որք այդպիսով իրենց հանգանակած գումարը իրենց քմահաճոյքին համաձայն գործելու ազատութիւնն ունենալ կը կարծեն վերոյիշեալ Թորիկեան և Մումեանի նման:

Ի Դիմաց Պուրկապէն Ազգային Վարժարանի Հոգաբարձութեան Ատենադպիր Ատենապետ Գ. Եարութիւնեան Կ. Պաքշիշեան Անդամ Եսայի Դաւիթեան (Կնիք) 27 Յունիս 1903 Պուրկապ

ԱՐԵՆԻՆԵԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ Լօզան, Զուլիջերիս Երկրորդ ստի

Բ. տարեշրջանի դասախօսութիւնները կսկսին Սեպտ. 1/14ին

Արեւելեան կամ հայկական կրթատունը կընդունի 10-20 տարեկան աշակերտներ, որոնց կու-

տայ, ծնողքներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագիտական առողջ ու լուրջ կրթութիւն մը, ներդաշնակօրէն և սերտիւ միացած ազգային հիմնական կրթութեան հետ: Հայ աշակերտներուն կաւանդուին, և այս պատանց ու է վճարումիս, հայերէն լեզու, հայ մատենագրութեան պատմութ. եւ այլն: Ընտանեկան կեանք:

Կարելի է նաեւ օգտուիլ տեղական հանրածանօթ դպրոցներէն: Կրթատան տարեթոշակը, հակառակ ընծայուած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, ասորինակ կերպով աման է: Կրթատան յայտագիրն ամէն ուղղորդ կը շրկուի:

ՏՆՕՐԷՆ, Մ. Նալպանտեան Տօքթ. ի գիտութիւն համալսարանական մասնաւոր-ուսուցիչ Հասցե' Լօնտրէ 1. Լօզան. —Միւլիս

«Տունն իմ տուն աղօթից կոչեցի և դուք արարիք զայն այս աւագակաց: (Սուրբ Գիորգ)

Ահա այս է արտասահմանեան կարգ մը մամուլի կատարած տր. խուր գերը, որը պիտի պատկերացնեմ «Շարժում» սուղ սիւնակներու մէջ. թէ և գրուած է մէկէ աւելի անգամներ, բայց և այնպէս ստիպուած եմ անգամ մը ևս անդրադառնալու և դիմակութեամբ ընելու այն մամուլը որ պարզապէս չարիք մը եղած է ազգին գլխուն: Անշուշտ ընթերցողը քիչ թէ շատ կը յիշէ թէ երբ կամ ո՞ր ժամանակ սկսաւ

ցուց. դատկեցաւ վտակին վրայն ու մտեցաւ սկսելու անհայտ ընկուզէնիւն տակ սեղանին: Ուր ծածկուած էր այսօրուան քրքիչը, ի՞նչ կընէին հիմա անոր գուարի՞ ընկերու հիները: Բախտաւոր էին անոնք. . . Անձայն, կամացուկ մը, խաւարի մէջ ստուերի պէս ու լուսութեան մէջ համարացածի պէս, մտեցաւ ու նստաւ նոյն նստարանին վրայ, ոյուն վրայ Ռօտինօֆ դուրս ելլալու ատեն կծկուած էր:

Եւ մտահոգ, ընկղմեցու յիշատակներու ծովին մէջ — ու սարսեցաւ. որովհետեւ յասակը կը գտնուէր:

Տեսաւ ինքզինքը այսպէս. ինչպէս որ սպրածէր մինչեւ այն ատեն, ու հազիւ ձանչցաւ. բայց և այնպէս ձանչցաւ. Եւ ամօթէն ընկնեցաւ. . .

Ահ, տղեկ է վայրկեանը այս ուշ գարթութեանը վատնուած երիտասարդութիւնն ետք, երկար ամօթալի անցնելէ ետք. . . Բայց քանի աւելի տղեկ է վայրկեանը, երբոր կարթննաս ինքզինքդ միտած գտնելու համար — ինչպէս որ գտաւ Ժիվքան — տեսնալու համար թէ կեանքդ կը բեկանի տեղ մը իրրեւ ձամբայ անդունդէ մը. տեսնալու համար մարմինդ

իրրեւ դիակ, որ երբէք չպիտի ապրի ա'լ ապագայի մէջ. տեսնալու համար հոգիդ տերեւաթափ ծառի պէս, որուն կանանչ տերեւները անզգալաբար ինչպէս ու երբ թափուած են, և թոշնիկները որոնք անոնց միջի կերգէին կայտան, ա'լ թուած են ուրիշ տեղեր հովանաւոր կանանչութիւն փնտռելու, երգելու ու հրճուելու համար. տեսնելու համար ինքզինքդ իրրեւ կմախք, որ ամէն բան կորսնցուցած է՝ ձեւը, ծալքը, գծերը, որոնք գեղեցկութիւնը կր կազմեն. տեսնելու համար ինքզինքդ իրրեւ աղբիւր, որուն անուշ կարկաչիւնք ա'լ չը լսուիիր. . .

Բայց ո՞ր թուած էին թոշնիկները — իր ձեւն ու յոյսերը:

Բայց ո՞ր անհետացած էին ձեւը, ծալքը, գծերը — հոգեկան գեղեցկութիւնը:

Բայց ո՞ր խուլցած էր աղբիւրի շնչիւնը — սրտին ձայնը:

Ժիվքան չէր գիտեր ու չէր կրնար գիտնալ, որովհետեւ կը խեղդէին զայն արցունքները, որոնք չէին կրնար բղխել:

Կամաց կամաց ամէն բան հասկընալ սկսաւ:

Հասկցաւ թէ իրեն կը պակսի բան

մը, շատ բան. ամէն բան. գաղափարի ախոյան Ժիվքան:

Բայց ուր մնացած էր ան. Միթէ արցունքներումէջ հայած ու անտնց հետ զո՞ւրս թափուած էր:

Ձայն մը, Ռօտինօֆին նմանող խորհրդաւոր ձայն մը փափաց պակաջին. — «Բաւէ ներքին այս կռիւր. . . կոտորումնէ. . . ինչո՞ւ կը վարանիս: Ի՞նչ կը կասեցնէ քեզ. . . Սրտանա. . . ո՞ր է. . . Այս խնամիրութիւնը կը նուստացնէ քեզ. . . Անոր հանդէպ դուն կը լռես ծախելու հանուած ապրանքի պէս. . . Իսկ ան, խնամին, արհամարհանքի անգամ արժանի չէ. . . քեռորդին անգամ ամօթ կզգար անկէ. . . Իսկ դուն կը վարանէիր թէ ի՞նչ անուն ասս զրկելու ատեն. . . Նոյն. . . իսկ ձեռքդ տուիր անոր. . . Դուն սեղմեցիր ոճրագործ ձեռքը. . .»

Այս խօսքերէն ետք Ժիվքան աւելի յստակօրէն կը տեսնէր իր հոգւոյն ներսիւրին:

Ու այս մարդը խնամիրութիւն կընէ ինձ, իմ ու տօքթօրին միջիւ միջնորդ կըլլայ: Անոր միջոցաւ ես Բրօլօմօֆին կրնը պիտի ըլլամ. մեր ապագան կը հիմնէ. իմ ապագայ կեանքիս բանալին անոր ձեռքն է. . . Տօքթօրը անոր բարեկամն է. . . բաւ

րեկա՞մը: Բայց կ'ընչպէս կարելի է ան, նրիտասարդ, անսպական, հազարաւոր տառապողներու յոյսը, այսքան գալարուած սրտերու ու տխրացած դէմքերու միջիւրիցը, այսքան արտասուած խոր մայրերու ու արդար մանուկներու նեցուկը, ինչպէս կարելի է ան, Ռօտինօֆին բարեկամը՝ անոր բարեկամն ալ ըլլայ: Եւ կը համբերեմ անպատիւ, եղեռնագործ խնամին. . .

«Կը հասկնամ, կը հասկնամ. . . Ան ըսաւ վերջապէս — ան կը մտածէ զիս գործածելով սոսկալի վկայաթղթութեամբ պարտկել. . . Լսելուն պէս թէ Ռօտինօֆ պիտի հրատարակէ պանսք վիրաւորուած գազանի պէս մրոնջեց. «ստիկա չպիտի ընես» ինչո՞ւ այսքան սոսկալի կերպով մորնջեց: Ըսել է թէ կը վախնայ: Ու աստոր համար իմ օգնութիւնս կը փրկտուէ. . . ծառայութիւն ծառայութեան փոխարէն. . . Ան զիս պիտի ստուանցնէ, իսկ ես պիտի փրկեմ զայն քաղաքական սնանկութենէ, դատաստանէ, բանտէ, թերեւս. . .

Թարգմանեց Անդրեաս Յակոբեան (Շարունակելի)

այս զգուցելի պրօպագանդան 96
 թուականին սկսաւ ծաւալել և
 տակաւ առ տակաւ սկզբունք մը
 դառցաւ «բարեխօսական» կազ-
 մակերպութեան միջաւայրի մէջ,
 այն օրը երբ հնչակեան ոխուր
 պառակտումը տեղի կուենար:
 Ու այն օրէն սկսան կարգ մը
 թերթեր իրենց արժանիքը կոր-
 սնցունել: Հետզհետէ այլա-
 սերման և անբարոյականութեան
 հանգրուանին վրայ կանգ առ-
 նել: ու իրենց անձուկ ըմբռնած
 ծրագիրը աւելի ընդլայնել: Այլ
 երեւակայեցեք թէ ուր պիտի
 հասնէր մեր վիճակը, այն պա-
 հուն՝ երբ հայ ազգը, ամենափա-
 փուկ ճգնաժամի մէջ կը գըտնը
 ուէր. այն օրէն եւս սկսան հրա-
 պարակ ելնել կոկորդիլոսի ար-
 ցունք թափող կարգ մը շառլա-
 թաններ և թափառաշրջիկ պոր-
 տաբոյժներ, ստամոգսային խա-
 շագողներ և վարպետ ճիզվիթ-
 ներ, հայատառ թերթիկներ
 հիմնելու մղձաւանջէն բռնուած,
 սկսեցին ինքզինքնին թունտ յե-
 զափոխականներ հռչակել: Բայց
 մի մոռնաք որ վերոյիշեալ որա-
 կումներով օժտուած և ամենա-
 տարրական գիտակցութեան
 «պէխապէր» սինլիքորներ ազ-
 գէն ճակատագրին հետ խաղալ
 փորձեցին և յեղափոխական հը-
 րապարակը ապականելու ջանքը
 ու ճիզը երբէք չխնայեցին և
 եղաւ նոյնիսկ կազմակերպութիւն
 որ քաջալերեց ասոնք տես-
 նելով կամ կարծելով թէ հայ
 ազգին ճակատագրին սանձը ի-
 րենց ձեռքը պիտի աճցնէր կամ
 անցնելու վրայ է բան մը ընել
 խորհեցան, ամենքը կարծես
 խօսք մէկ ըրած, և հասան այն
 որոշման թէ պէտք է ունէ յեղա-
 փոխական կազմակերպութեան
 մէջ սպրդիլ, ահա այսպիսով
 կրնանք մեր թագուն նպատակին
 հասնել. տեսան թէ Դաշնակցու-
 թեան մէջ սպրդել անկարելի է
 իսկ միւս կողմը հնչակեան խար-
 խուլ կուսակցութիւնը արգէն
 կակնկալէր գրկաբաց ընդունել
 և գրկընդխառնուելով համբու-
 ուել, և այդպէս ալ եղաւ: Ու
 բոլորեցին հնչակեան «խրոխ-
 ճանքի սեզանին շուրջը» և սկսե-
 ցին ծանր և միակ պատասխանա-
 տու լուծը — յեղափոխութիւնը —
 իրենց ուսերուն վրայ առնել (".")
 ալ յեղափոխական ասպարէզին
 տիրացած կարծելով ինքզինքնին
 սկսեցին մօլեգնաբար պոռնիկ-
 ներու և ռուլթանական վարձկան-
 ներու յատուկ յարմարութեամբ
 կռիւ մղել հայ ազգին էն միակ
 յոյսը և ապաւենը եղող կազմա-
 կերպութեան դէմ — Դաշնակ-
 ցութիւնը ըսել կուզեմ — ու չի-
 նական պարիսպին ետին կանգ-
 նած հաջգետութեանը և «ոռնա-
 լով» քանդել ուղեցին ան: Վեր-

ջ. պէս ակռանին թափած շունե-
 բու նման ալ յուսահատած տեղի
 տուին բարոյական յաղթանակին
 առջեւ, ժամանակը անցաւ այդ
 շրջանին: Եւ վեց տարի շարու-
 նակ գաղտնի գործելով հռչակա-
 ւոր մարտ 24ին ամենախայտա-
 ռակ միութիւն մը առաջ բերին.
 այլևս թագուն նպատակին մէկ
 մասը ապահոված խանդավառ-
 րէն նոր շրջանի մը թեւակոխի-
 լով, (արգէն ամէն մէկ հայի ծա-
 նօթ է թէ ինչ եղաւ այդ որոշ
 նպատակով ծրագրուած միւս-
 թեան հետեւանքը և գեռ ինչեր
 ալ պիտի ըլլան իր ցոյց տուած
 նշաններով. ես չեմ ուզեր ման-
 րամանութեանց մէջ մտնել ո-
 բովհետեւ պզգանք և արհամար-
 հանք միայն կը նուիրիմ հրա-
 պարակը գարշահոտող միութեան)
 սկսեցին հանգանակութիւններ,
 ժողովներ, հանդէսներ, հրաւեր,
 «կոչոց», վերջապէս փոխօրիկ
 մըն էր փրթուցին. իսկ անդին
 իրենց ներքին ժողովներու մէջ,
 Դաշնակցութեան գլխուն լախտի
 հարուածներ կը նրկէին, սա-
 կայն «բանից» գործ է գալիս որ
 զամենայն աւուրս աշխատեցանք
 միմիայն 20 հազար տուար կու-
 տուանք: Լախտի հարուածը մը-
 նաց բացը. այդ ալ բաժին ին-
 կու ճշմարիտ յեղափոխականին,
 հիմայ կը մնար այս «անելուն»
 գուրս ելնել. բայց ինչպէս
 ճշմարիտ յեղափոխականը առաւ
 իր բաժին ինկած, ու իրենց ձեռ-
 քով նրկեմ լախտի հարուածը
 ու «պատնէչին» վերու կանգնած
 սկսաւ թակնել. գեռ չենք գիտեր
 մինչեւ երբ. իրերի գրութիւնը
 զիրենք չափազանց նեղը գրած,
 ալ խելահեղ վիճակին դատապար-
 տած «մարդամբքնաներու վոհ-
 մակը վերջապէս ելք մը գտաւ,
 աշխարհի վրայ գտնուած ամե-
 նակտի հայհոյիչ մը ձեռք ձգեց
 որուն աճուն է Սուրէն Պարթե-
 եան «Վազգուան ձայն» հռչակա-
 ւոր հակայեղափոխական. ու այդ
 վարձկան յղափոխականը իւրմ-
 բագիրը Անտլ. նոյն ովկեանը
 ճեղքելով ամերիկայի Ալբա-
 ձայն թերթին հայհոյախմբագիր
 եկաւ. իսկ միւս կողմէն հոս ու
 հոն պրօպագանդիստներ զրկուե-
 ցան:

Սպա կեդրոն բազմեցուցին
 մատնիչ ճահրիման մը ու տնոր
 ոչ պակաս համախոհներ: Երկրի
 գրութիւնը այս անգամ լաւ էր ի
 հարկէ իրենց կարծիքով, ու ե-
 թէ այս անգամ ալ չյաջողէին
 մատնութեան պիտի գիմէին ինչ-
 պէս որ առաջին նշանները բրեւ-
 ցած ու հեռագրեմ տարակոյս չը
 կայ թէ պիտի ծաւալի որովհե-
 տեւ... խօսքը մէջերնիս կեդ-
 րոն նստողը մա մա մատնիչ մըն է
 և ինչ կակնկալէք որ ըլլայ անոր
 հրահանգը: Ահա այս է ներկայ

շրջանի նոր սիւսէմը որ թեւա-
 կոխեց հնչակեան գլուխ գործոց
 կազմակերպութիւնը: Հայ ժողո-
 վուրդ աչքը բաց և զգուշացիր
 այդ թույլ փշոզ խարդախ և խա-
 բերայ թափառաշրջիկներէն ո-
 լոնք սմբողջ 6 տարի խաբեցին
 քեզ. ասոնք են որ քու արիւնը
 ծծեցին ու պիտի ծծեն քանի չչ-
 գուշանաւ. իսկ դուն հայ երի-
 տասարդ եթէ գուն ունիս քու
 երակներուդ մէջ կաթիլ մը հայու
 արիւն. այդ ալ զոհէ հայրենի-
 քիդ որ քիչ տարիներով սնուցած
 ու մեծուցած է իր ծոցին մէջ
 զոհէ անոր կրտսեմ որովհետեւ քու
 տառապող եղբայրներդ մէկ խօս-
 քով տարաբախտ հայրենիքդ մոխ-
 րակոյտ մը դառնալու շրջանին
 մէջ կը գտնուի: Ընդ որ քու բարո-
 յական ու նրկական ուժերդ Հայ
 յեղ. Դաշնակցութեան որը ամբողջ
 13 տարիներ անդուլ ու անդու-
 դար աշոյտտած է ու կաշխատի
 հայրենիքի վերածնութեան հա-
 մար. բան մը որ իր անցեալով
 փառաւորապէս ցոյց տուած է.
 տուր քու ուժը կրտսեմ անոր ու-
 բուն մէջ պիտի գտնես ճշմար-
 տութիւն և անձնութիւն: Իսկ
 իրար ուտողներու խմբակին
 բառ չկայ որ որակները եթէ ոչ
 ստունն իմ տուն աջօթից կոչեցի
 և դուք արարիք զայն այսու ա-
 զակուց. որչա՞ք դաւաճանաց, բոյ-
 նա մարդակերպ գազանաց և ի
 վերայ այս արմենայնի՞ գլուխ
 գործոց կազմակերպութիւնս
 մատնիչաց:

28 Յունիս 1903
 Լորեն

Ա Ջ Դ

Հոգաբարձութիւնս կը հրաւի-
 րէ արգոյ հայ հասարակութիւնը
 ներհայ գտնուիլ տեղւոյս իզգ.
 երկսեռ վարժարանաց տարեկան
 վիճակացոյցներու բաշխման հան-
 դէսին, որ տեղի պիտի ունենայ
 յառաջիկայ կիրակի, 6 յուլիս,
 կէս օրէն վերջ ժամը 2ին «Սուր-
 տինէնիյէ» սրահին մէջ մասնակ-
 ցութեամբ «Գողթան» երգեցիկ
 խումբին:

Ի դիմաց Ազգ. երկսեռ վար-
 ժարանաց Հոգաբարձութեան
 Ատենապետ Գ. Աւագեան 6. Մ. Թովմասեան
 2 Յուլիս 1903 (ԿԵԻԲ)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռօտ. ազատական կուսակցու-
 թեան համագումարը զօրեղ տպա-
 ւորութիւն գործած է ամբողջ
 Պուլկարիոյ մէջ: Ռօտոսլափոտ-
 ները այդ համագումարին մէջ ո-
 բոշած են ներկայ նախարարու-
 թեան հետ միասին գործել:

Նախարարին ռուս դատապար-
 տութիւնը կարծես թէ կուսակ-
 ցութիւնը աւելի զօրեղացնելու
 շարժառիթ մը եղաւ:
 — Հունիս քերթ սկսուած են. այս
 տարի Պուլկարիոյ մէջ չը տես-
 նուած առատութիւն կայ կսեն:

ՍՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա
 Թուրքիոյ և Պուլկարիոյ յարա-
 բերութիւնները շարունակ ձրգ
 տուած վիճակի մէջ են չի նայե-
 լով որ երկու կողմէն ալ զիրար
 կը հանգստացնեն:
 Թուրք կառավարութիւնը պե-
 տութիւններուն ուղղած նոր շըր-
 ջաբերականով մը կը հերքէ Պուլ-
 կարիոյ մեղադրանքները:
 — Մեծ վեզիրը վերջերս պաշ-
 տօնապէս յայտարարած է թէ
 Պուլկարիոյ սպառնալիքները չեն
 կրնար արգելել որ թուրքիւն
 միջոցներ ձեռք առնէ կայսրու-
 թեան ապահովութեանը համար:
 — Նախարարական նիստի մէջ
 որոշուած է իսկոյն 1906 արագա-
 ձիգ թնդանօթ պատուիրելի Բրու-
 բի գործարանին:
 — Անցեալները Սարաֆօղի նա-
 խագահութեամբ, հարկերէն ա-
 ւելի կարեւոր ապստամբներ Մա-
 կեդոնիոյ մէջ ժողովներ ունեցե-
 ր են:
 — Մօնաթրի վիլայէթին մէջ
 շարունակ նոր հրոսախմբեր կը
 կազմուին. ընդհարումներ տեղի
 կուենան:

ՊԱՐՍՅԱՍՏԱՆ
 Թավրիզի վերջին խոսովու-
 թիւններուն պատճառով կառա-
 վարութիւնը այդ քաղաքին հո-
 գեւորականութեան յայտարարի-
 է և բնակիչներուն, որ իրենց
 պահանջները Եւրոպացիներու
 մասին չը պիտի կատարուին:

Կառավարութիւնը խիստ մի-
 ջոցներ ձեռք առած է խոսովա-
 րարները զսպելու համար, մա-
 նաւանդ Քլաւուր գրգռիչները,
 որպէս զի այլևս չը կրկուին այդ
 տեսակ խոսովութիւնները:
 Եւրոպացի պաշտօնեաները
 կրկին պաշտօններուն գլուխը
 անցած են:

Մաքսային նոր տուրքը խստի-
 կիրագործուի: Խաղաղութիւնը
 վերհաստատուած է ամեն տեղ:
 ԻՏԱԼԻԱ
 Փափի առողջական վիճակը թէև
 մեղմացած է, բայց յոյս չը կայ
 Եւրոպական թերթերը երկար ու
 բարակ յօդուածներ կը նուիրեն
 փափին:

ԱՆԳԼԻԱ
 Լուպէ եզակի ընդունելութեան
 մը արժանանալէ վերջ, ինչ անգ-
 ւալի ժողովրդին և թէ թագա-
 ւորին կողմէն, վերագարձաւ
 փրանսա:

Отговорникъ
 Мурадъ-Ерановичъ
 Печатница К. Николовъ — Варна.